

ԱԿՆԱՐԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ¹

Հատվածի ճանապարհային քարտեզ

1. Հատվածի կատարողականը, խնդիրները և հնարավորությունները

1. Հայաստանը զգալիորեն բարելավել է իր պետական հատվածի կառավարումը, սկսած 2000թթ. սկզբից: Ըստ այդմ, երկրի տոկոսային ռանկավորումները բարձրացել են վեց «ուղղություններից» մեծ մասի գծով, որոնք չափվում են Համաշխարհային Կառավարման ցուցանիշներով 2002թ.-ից մինչև 2013թ: Ռանկավորումն էականորեն աճել է հետևյալ երեք ուղղություններով՝ կառավարման արդյունավետություն, կարգավորումների որակ, և հատկապես քաղաքական կայունության և բռնության / ահաբեկչության² բացակայության: Նմանապես, Հայաստանի վարկանիշը բարելավվել է Համաշխարհային Տնտեսական Ֆորումի գլոբալ մրցակցային զեկույցներում մի շարք ցուցանիշների գծով, որոնք վերաբերում են հաստատությունների որակին (օրինակ, գույքային իրավունքներ, պետական միջոցների տարբերակում, պետական ծախսերի վատնում, պետական կարգավորման ծանրաբեռնվածություն, կառավարության քաղաքականության մշակման թափանցիկության, և աուդիտի և հաշվետվությունների ստանդարտների ուժ)³:

2. Չնայած այս բարեփոխումներին, Հայաստանի ռանկավորումը Համաշխարհային կառավարման ցուցանիշների մեծամասնության մասով դեռևս ցածր էր 60 տոկոսից 2013 թ.-ի դրությամբ, որտեղ Չայն եւ Հաշվետվողականության և Կոռուպցիայի Վերահսկման ցուցանիշներն իջել են մինչև 30 տոկոս:⁴ Իսկ Համաշխարհային Մրցունակության Ձեկույցում

¹ Սույն ամփոփ ակնարկը հիմնված է Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) 2013թ.-ի Հայաստանի կառավարման, ինստիտուցիոնալ և կոռուպցիոն ռիսկերի գնահատում, ներառյալ՝ Ազգային Մակարդակ, Էներգետիկա, Քաղաքային, Զրային և Տրանսպորտի ոլորտները: Խորհրդատուների հաշվետվություն, Մանիլա (SU 7277-REG):

² Համաշխարհային բանկ. Համաշխարհային Կառավարման Ցուցանիշներ. <http://databank.worldbank.org/data/views/variableselection/selectvariables.aspx?> Երկրի տոկոսային դասակարգումը Համաշխարհային կառավարման ցուցանիշներում, դա այն երկրների համամասնությունն է, որոնք ունեն ավելի ցածր միավորներ, քան տվյալ ցուցանիշին վերաբերող երկիրը, հաշվելով երկրների ընդհանուր թիվը, որոնց համար ցուցանիշի միավորը հաշիվը հասանելի է: Համաշխարհային կառավարման ցուցանիշները հաշվարկվում են 200 երկրներում եւ տարածքներում: Փոփոխությունները Հայաստանի տոկոսային վարկանիշների ցուցանիշներից յուրաքանչյուրի համար 2002-2013թթ. հետևյալն էին՝ Չայնի իրավունք և հաշվետվողականություն՝ 36 տոկոսից մինչև 29; Քաղաքական Կայունություն և բռնության / ահաբեկչության բացակայությունը՝ 33-50; Կառավարության արդյունավետությունը՝ 50 – 58; Կարգավորող Որակ՝ 53- 59; ՕԵԿ՝ 43-45; Կոռուպցիայի վերահսկում՝ 34-40:

³ Մ. Փորթեր և Կ. Շվաբ 2008 թ. Համաշխարհային Մրցունակության Ձեկույցը 2008-2009թթ. Ժնևի Համաշխարհային տնտեսական ֆորում. էջ 91; Կ. Շվաբ, խմբ. 2013 թ. Համաշխարհային Մրցունակության Ձեկույցը 2014-2015. Ամբողջական խմբագրություն. Ժնևի Համաշխարհային Տնտեսական Ֆորում. Երկրի վարկանիշի փոփոխություններն ըստ այս ցուցանիշներից յուրաքանչյուրի 2008-2009թթ. և 2014-2015թթ. համապատասխանաբար եղել են՝ ,գույքային իրավունքները: 69-ից 67; հանրային միջոցների տարբերակում՝ 110-80; պետական ծախսերի վատնումը՝ 77-ից 76; պետական կարգավորման բարդություններ՝ 71-ից 43; կառավարության քաղաքականության կայացման թափանցիկություն՝ 103-ից 39; և աուդիտորական և հաշվետվողական ստանդարտների ուժը՝ 97-ից 83: Նշենք, որ 2008-2009թթ. տվյալները 134 տնտեսություններից է և 2014-2015թթ. տվյալները 144 տնտեսություններից:

⁴ Համաշխարհային Բանկ. Համաշխարհային կառավարման ցուցանիշներ:

2014-2015թթ., Հայաստանի որոշ վարկանիշները դեռևս միջակ են, մասնավորապես, Հայաստանը 83-րդն է (144 երկրներից) աուդիտային և հաշվետվողականության չափանիշներին ուժով, և 80րդ-ը պետական միջոցների տարբերակումով:⁵

3. Պետական ֆինանսական կառավարում՝ պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումները ներառում են միջնաժամկետ ծախսերի ծրագրի ներկայացումը և ծրագրային բյուջետավորման տարրերը (ինչպես, օրինակ, ծրագրի կողմից բյուջետային ծախսերի դասակարգումը), բոլոր պետական հաշիվների համախմբումը միասնական գանձապետարանի հաշվի մեջ և կանխիկ և պետական պարտքի կառավարման ամրապնդումը: Գրեթե բոլոր պետական ծախսերն այժմ ուղղվում են միասնական գանձապետարանի հաշվին: Կանխիկի պլանավորումը և միջոցների տրամադրման ժամանակահատվածը համապատասխանում է ամենաբարձր չափանիշներին, և կառավարությունը մշակել է բյուջետային ծրագրի անձնագրեր որոշ ոլորտների համար:

4. Այնուամենայնիվ, ծրագրային բյուջետավորումը հիմնականում մնում է ներկայացնողական կատարողականի տեսակ՝ կատարողականի վերաբերյալ տեղեկատվությունը հավաքվում է և ներկայացվում, սակայն դրա օգտագործումը բյուջեի որոշումների կայացման մեջ բավականին սահմանափակ է: Բազմաթիվ ոլորտների մարմիններ դեռևս չեն վերարտադրում կատարողականի որակյալ տեղեկատվություն, որն անհրաժեշտ է ծրագրային բյուջետավորման օգտագործման շրջանակներում օգտագործելու համար: Ուշադրության կենտրոնում է քանակական ցուցանիշների վրա, որը տրամադրված է սահմանափակ տեղեկատվության հիման վրա՝ արդիականություն և պետական միջամտությունների արդյունավետության վերաբերյալ: Բյուջետային ծրագրի անձնագրեր դեռևս պետք է մշակվեն բազմաթիվ ոլորտների համար: Ծրագրային բյուջետավորման ամբողջական իրականացումը պահանջում է կարողությունների զարգացում ՀՀ ֆինանսների նախարարությունում և ոլորտային կառույցներում:

5. Գնումներ՝ 2009թ.-ից հետո Հայաստանը ունեցել է նշանակալի առաջընթաց գնումների օրենսդրության, ինստիտուցիոնալ կառուցվածքի և գործընթացների մասով: Գնումների օրենսդրությունը հիմնական մասով համապատասխանեցվել է Եվրամիության չափանիշներին: Գնումների համակարգը ապակենտրոնացվել է: Կենտրոնական գնումների գործակալությունը՝ Գնումների Աջակցման Կենտրոնը (ԳԱԿ), վերանայում և աջակցում է գնման գործընթացներին և տրամադրում է գնումների գծով ուսուցում և խորհրդատվություն: Գնումների Բողոքարկման Խորհուրդը զբաղվում է գնումների գծով բողոքներով; ԳԱԿ-ը հանդես է գալիս որպես Խորհրդի քարտուղար, և նրա որոշումներն իրավաբանական ուժ ունեն: Կառավարությունը ներդրել է գնումների նոր գործընթացներ՝ ներառյալ էլեկտրոնային գնումների համակարգը: Սակայն գնումների օրենսդրության մեջ անհրաժեշտ է կատարել փոփոխություններ՝ էլ-գնումների համակարգը լիարժեք դարձնելու նպատակով:

6. Գնման գործընթացները պարզեցման կարիք ունեն և մի շարք գնումներ իրականացնող կառույցների կարողությունները պետք է զարգացվեն: Որոշ կառավարության մարմիններում գնումների ստորաբաժանումները չափազանց փոքր են՝ առանց բավարար որակավորված անձնակազմի, ինչն անհրաժեշտ է գնումների պահանջները բավարարելու համար:

⁵ Շվար՝ Համաշխարհային Մրցունակության Հաշվետվություն 2014–2015:

Պատվիրատուները ոչ միշտ են ժամանակին օգտագործում պետական միջոցները և հաճախակի նրանք շտապում են ծախսել իրենց բյուջետային գումարները տարվա վերջում: Ինչի հետևանքով ոչ բավարար ժամանակ է մնում մասնագրերի պատրաստման և մրցակցային գնումներ իրականացնելու համար: Այսպիսի դեպքերում, պատվիրատուները հաճախ կիրառում են մեկ աղբյուրից գնման եղանակը՝ ոչ պատշաճ մասնագրերով և պայմանագրային պայմաններով: Գնման գործընթացները հաճախ ոչ թափանցիկ և ոչ մրցակցային են: Առկա են բազմաթիվ խնդիրներ գնման պայմանագրերի իրականացման դաշտում՝ ներառյալ դաշտային և տեխնիկական վերահսկման անբավարարություն կամ բացակայություն, ապրանքների և աշխատանքների ընդունում պատվիրատուների կողմից՝ նախքան դրանց փաստացի մատակարարումը կամ տեխնիկական մասնագրերին չհամապատասխանող ապրանքների և աշխատանքների ընդունում:

7. **Ներքին և արտաքին աուդիտ**՝ ներքին աուդիտի օրենքը, որն ընդունվել է 2010 թվականին, հիմնված է միջազգային լավագույն փորձի վրա: Սակայն, օրենքի իրականացումը դեռևս անբավարար մակարդակի վրա է: Պետական ոլորտի կառույցների ներքին աուդիտի ստորաբաժանումների կարողությունը ընդհանուր առմամբ ցածր է, մասնավորապես, կատարողականի և արդյունավետության աուդիտի մասով: Ներքին աուդիտի ստորաբաժանումների աշխատողները ոչ միշտ ունեն ոլորտին համապատասխանող փորձ և գիտելիք: Թեև ներքին աուդիտի օրենքը նախատեսում է ներքին աուդիտի որակավորման մեխանիզմ, գործնականում այդ մեխանիզմը պատշաճ կերպով չի կիրառվում:

8. Վերահսկիչ Պալատը (ՎՊ) աուդիտի գերագույն հաստատությունն է: 2005թ.-ին իրականացվել են սահմանադրական փոփոխություններ և համաձայն 2006թ.-ի ՎՊ-ի մասին օրենքի այն առանձնացվել է խորհրդարանից և դարձել ավելի անկախ: Օրենքը նաև ընդլայնել է ՎՊ-ի աուդիտորական ուժը՝ ներառելով պետական և համայնքային բյուջեի ծախսերի և եկամուտների աուդիտը և պետական և համայնքային գույքի աուդիտը: Սույն օրենսդրական բարեփոխումները Հայաստանի արտաքին աուդիտի շրջանակն ավելի համապատասխանեցրեցին Միջազգային Բարձրագույն Վերահսկիչ Հաստատությունների Կազմակերպության կողմից հաստատված աուդիտորական չափանիշներին: Սակայն, ՎՊ-ն դեռևս լիովին զերծ չէ քաղաքական ազդեցությունից, քանի որ այն չունի բավարար վարչական և ֆինանսական ինքնավարություն իր գործողություններում: ՎՊ-ի կարողությունները պետք է զարգացվեն՝ ներառյալ ֆինանսական, կատարողականի և արդյունավետության, ինչպես նաև բնապահպանության աուդիտների գծով: ՎՊ-ն նախաձեռնում է որակի աուդիտներ (մասնավորապես մեծ ենթակառուցվածքային ծրագրերի), սակայն չունի բավարար կարողություններ այդ աուդիտները արդյունավետ կերպով իրականացնելու համար:

9. **Քաղաքացիական ծառայություն**՝ Հայաստանը ներկայացրել է քաղաքացիական ծառայության համակարգ՝ քաղաքական ղեկավարության փոփոխությունների արդյունքում մասնագիտական անձնակազմի շրջանառությունը նվազեցնելու համար: Նպատակը մեծամասամբ իրականացվել է: Սակայն, համակարգում կան մի շարք բարդություններ, որոնք շարունակում են ունենալ բացասական ազդեցություն պետական ոլորտի գործունեության կատարողականի վրա: Քաղաքացիական ծառայության խորհուրդը առանցքային դեր է խաղում աշխատանքի ընդունման, աշխատանքից ազատման, պաշտոնների բարձրացման և քաղաքացիական ծառայողների կարգապահության մեջ: Քաղաքացիական ծառայության համակարգում գործող կառույցները քիչ միջամտություն ունեն այդ հարցերում, ուստի նրանց

կարողությունը կատարողականի արդյունավետ և ժամանակին կառավարման ուղղությամբ սահմանափակ է: Բացի այդ, կան բավարար խթաններ կատարողականի բարձր չափանիշների հասնելու համար: Քաղաքացիական ծառայողների քննությունները պաշտոնական են և հիմնականում կենտրոնանում են օրենսդրության գիտելիքների վրա: Քաղաքացիական ծառայության վարձատրությունը զգալիորեն ցածր է, քան մասնավոր հատվածինը, ինչը դժվարեցնում է որակյալ մասնագետների հավաքագրումը և պահպանումը, ինչպես նաև ավելացնում է կոռուպցիայի վտանգը:

10. **Սպակենտրոնացում`** Սահմանադրությունը, որն ընդունվել է 1995 թ., ստեղծել է երկու շերտանի կառավարության համակարգ, որը բաղկացած է կենտրոնական կառավարության և տեղական ինքնակառավարման մարմիններից: Ջրամատակարարման և ջրահեռացման, կոշտ թափոնների հավաքման և հեռացման, շինարարության, ճանապարհների վերականգնման և պահպանման գործառնությունները համայնքների իրավասության տակ են , և հասարակական տրանսպորտի կարգավորումը` համայնքների վարչական սահմաններում հանձնարարվել են տեղական ինքնակառավարման մարմիններին: Տեղական ինքնակառավարման օրենքն ընդունվել է 2002 թ.-ին, և 2005 թ-ի սահմանադրության փոփոխությունները լրացուցիչ գործառնություններ են տվել տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպիսիք են համայնքի զարգացման, կոմունալ տնտեսության շինարարության և շահագործման, և համայնքների կազմում գտնվող հողերի կառավարման գործառնությունները: Չնայած որ այդ պարտականությունների ապակենտրոնացումը բարելավել է հանրային ծառայությունների առաքումը, շատ դեպքերում, այն նաև նվազեցրել է տեղական մակարդակում պետական կառավարման արդյունավետությունը, ինչը պայմանավորված է համայնքների մեծ քանակով, որոնցից մի քանիսը շատ փոքր են, և ունեն սահմանափակ հարկային հիմքերը:⁶

2. Կառավարության ոլորտային քաղաքականություն

11. Հանրային կառավարման արդիականացումը և կառավարումը Հայաստանի զարգացման ռազմավարության 2025 (ՀԶՌ) չորս գերակա ուղղություններից մեկն է, որը հստակեցնում է կառավարության երկարաժամկետ զարգացման տեսլականը:⁷ Պետական կառավարումն արդիականացնելու և բարելավելու նպատակով ՀԶՌ-ն կոչ է անում ամրապնդել պետական ֆինանսների կառավարումը, բարեփոխել պետական տեսչական համակարգը, ընդլայնել տեղական ինքնակառավարման մարմինների զարգացումը, բարելավել էլեկտրոնային կառավարումը, բարելավել քաղաքացիական ծառայությունը և դատական համակարգը, նվազեցնել կոռուպցիան: Մասնավորապես, ՀԶՌ-ն կոչ է անում լիովին անցնել ծրագրային բյուջետավորման, ներդնել ներքին ֆինանսական հսկողություն բոլոր պետական մարմինների համար, ստեղծել միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգ ներքին աուդիտի համար, ներդնել պետական ներդրումների. մանրամասն գնահատման համակարգ, ստեղծել միասնական ռեգիստր հանրային ոչ ընթացիկ ակտիվների համար, միավորել համայնքները, ուժեղացնել տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունները, և քաղաքացիական ծառայողների աշխատավարձերը ավելացնել տարեկան առնվազն 10% -ով` 2014 թ.-ից սկսած:

⁶ Ներկայումս Հայաստանում կա 915 համայնք, որից 49 քաղաքային են և 866 գյուղական:

⁷ ՀՀ Կառավարություն 2014. Հայաստանի Զարգացման Ռազմավարություն 2025. Երևան

12. *Հայաստանի Հանրապետության Կառավարության Ծրագիր*՝ կառավարության միջնաժամկետ գործողությունների պլանը ներառում է պետական հատվածի կառավարման բարելավմանն ուղղված միջոցառումների լայն շրջանակ,⁸ ներառյալ՝ որակավորված մասնագետների ներգրավման միջոցով պետական հաստատությունների զարգացում, պետական կառավարման բոլոր ճյուղերում միասնական և արդար վարձատրության համակարգի ներդրում; պետական կառույցների թափանցիկության և հաշվետվողականության աճ և գործառույթների կրկնողության վերացում; բիզնես կարգավորումների հետագա օպտիմիզացում; հարկային և մաքսային կառավարման արդիականացում; մրցունակության պահպանման համակարգի ուժեղացում; տեղական ինքնակառավարման զարգացում; դատական համակարգի արդյունավետության բարձրացում; և կոռուպցիայի դեմ պայքար: Ծրագիրը շեշտում է պետական միջոցների արդյունավետ և թափանցիկ օգտագործման կարևորությունը: Այն նաև նախատեսում է, որ անցումը ծրագրային բյուջետավորման կշարունակվի, պետական միջոցների օգտագործումը կհամապատասխանեցվի կառավարության զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ առաջնահերթություններին, ռեսուրսները կվերաբաշխվեն ցածր արդյունավետություն ունեցող ծրագրերից դեպի բարձր արդյունավետություն ունեցողները, որքանով դա հնարավոր է, էլեկտրոնային գնումների համակարգը լիարժեք կգործի, ներքին և արտաքին ֆինանսական աուդիտի համակարգերը կբարելավվեն, և բյուջեի արտաքին վերահսկողության իրականացումը կուժեղացվի:

3. ԱԶԲ Ոլորտի Փորձ և Աջակցման Ծրագիր

13. Ասիական Զարգացման Բանկին (ԱԶԲ) 2005թ. -ին միանալուց հետո, Հայաստանը ԱԶԲ-ից ստացել է աջակցություն պետական հատվածի կառավարման բազմաթիվ ոլորտներում: Գյուղական ճանապարհների ծրագրի միջոցով ԱԶԲ-ն աջակցեց Տրանսպորտի և Կապի Նախարարության կարողությունների զարգացմանը:⁹ Որպես Ասիայի և Խաղաղօվկիանոսային Տարածաշրջանի Գնումների Համագործակցության Նախաձեռնության մի մաս, ԱԶԲ-ն իրականացրեց Հայաստանի էլեկտրոնային պետական գնումների ուսումնասիրություն: Ուսումնասիրությունը հետազոտեց կառավարության էլ-գնումների ծրագիրը և առաջարկություններ արեց դրա իրականացման բարելավման գծով:¹⁰ Համագործակցելով զարգացման այլ գործակալությունների հետ, ԱԶԲ-ն օգնեց կառավարությանը պատրաստել Հայաստանի Հանրապետության էլ-գնումների համակարգի բարեփոխումների 2013–2015թթ. ճանապարհային քարտեզը: Տեխնիկական աջակցության ծրագրի միջոցով, որն ուղղված էր *Ինստիտուցիոնալ Արդիականացմանը*՝ բիզնես մթնոլորտը բարելավելու համար, ԱԶԲ-ն օգնեց Հայաստանին ներդնել ավտոմատացված առցանց բիզնես ռեգիստրը, որը կրճատեց բիզնեսի գրանցման համար պահանջվող ժամանակահատվածը:¹¹ Տրամադրելով երկու ծրագրային վարկ՝ Ճգնաժամից Հետո Վերականգնման Աջակցության Ծրագրի համար, ԱԶԲ-ն օգնեց կառավարությանը իրականացնել հակաճգնաժամային

⁸ ՀՀ Կառավարություն 2014. ՀՀ Կառավարության Ծրագիր. Երևան

⁹ ԱԶԲ 2011. Ավարտման հաշվետվություն՝ Հայաստան, Գյուղական ճանապարհների Ծրագիր, Մանիլա:

¹⁰ ԱԶԲ 2011. Հայաստան՝ էլ-գնումների Զարգացման Ուսումնասիրություն, Խորհրդատուի հաշվետվություն, Մանիլա (R-CDTA 7437):

¹¹ ԱԶԲ 2009. Հայաստան՝ Ինստիտուցիոնալ Արդիականացում Բիզնես Միջավայրի Բարելավման Համար, Մանիլա:

միջոցառումներ՝ ի պատասխան 2008–2009թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամին:¹² Ջրամատակարարման և Ջրահեռացման Ծրագրի շրջանակներում ԱԶԲ-ն աջակցում էր Հայաստանին ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում ֆինանսական կառավարման ուժեղացմանը, մասնավորապես, ներկայացնելով նոր հաշվապահական գործընթացներ, համակարգչային վճարման համակարգ և ակտիվների քարտեզագրման համակարգ:¹³ Բազմափուլ ֆինանսավորման գործիքի առաջին տրանշը, որն է Կայուն Քաղաքային Ջարգացման Ներդրումային Ծրագիրը, նաև օգտագործվում է Երևանում քաղաքային տրանսպորտի կառավարման բարելավման համար:¹⁴ Տարածաշրջանային տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակներում ԱԶԲ-ն աշխատում է կառավարության հետ՝ կարողությունների զարգացման միջոցով գնումների բարելավված արդյունքներ ստանալու նպատակով:¹⁵

14. Նայելով առաջ, ԱԶԲ-ն կշարունակի Հայաստանին տրամադրել բազմակողմ աջակցություն՝ պետական հատվածի կառավարման բարելավման համար: ԱԶԲ-ն կօգնի կառավարությանը ավելի օգտակար և արդյունավետ կերպով օգտագործել կատարողականից ստացվող տեղեկատվությունը բյուջետային որոշումների կայացման ժամանակ, հատկապես օգնելով մշակել պատշաճ կատարողականի ցուցանիշներ երկրի ռազմավարության և ծրագրի առաջնահերթ ոլորտների համար՝ տրանսպորտ, քաղաքային զարգացում և էներգետիկա: Մասնավորապես, Ենթակառուցվածքների Կայունության Աջակցության Ծրագիրը կօգնի Հայաստանին բարելավել ճանապարհային և ջրային ծառայությունները՝ արդյունքներին ուղղված պետական կառավարման և ֆինանսական բարեփոխումների միջոցով:¹⁶ Կենտրոնացումը Հայաստանի ճանապարհային ցանցի և ջրամատակարարման առաջնահերթ ծախսերի վրա, Հայաստանի ներդրումները կդարձնի ֆինանսապես ավելի կենսունակ: Ի լրացում ճանապարհների վրա կենտրոնացմանը, ԱԶԲ-ն կշարունակի աջակցել կառավարությանը տրանսպորտի ոլորտի կառավարման ընդհանուր բարելավման մասով:

15. ԱԶԲ-ի քաղաքային զարգացմանն ուղղված աջակցությունը կներառի աշխատանք երկրորդային քաղաքների քաղաքապետարանների հետ՝ քաղաքային զարգացման պատշաճ ծրագրեր մշակելու, պետական ֆինանսների տեղական կառավարման բարելավման, և կոմունալ ծառայությունների կառավարման կարողությունների զարգացման նպատակներով: Էներգետիկայի ոլորտում ԱԶԲ-ն կառավարությանը կաջակցի իրականացնել իրավական, կարգավորիչ և ինստիտուցիոնալ բարեփոխումներ, որոնք անհրաժեշտ են հիդրոէներգետիկ ծրագրերում բնապահպանական կայունությունն ապահովելու և մասնավոր հատվածի մասնակցությունը վերականգնվող էներգիայի օգտագործման մասով հեշտացնելու համար:

¹² ԱԶԲ 2009. Նախագահի Հաշվետվություն և Առաջարկություն Տնօրենների Խորհրդին՝ Առաջարկվող Ծրագրային Վարկեր Հայաստանի Հանրապետությանը՝ Ճգնաժամից Վերականգնման Աջակցության Ծրագիր, Մանիլա:

¹³ ԱԶԲ, 2012. Նախագահի Հաշվետվություն և Առաջարկություն Տնօրենների Խորհրդին՝ Առաջարկվող Վարկ Հայաստանի Հանրապետությանը՝ Ջրամատակարարման և Ջրահեռացման Ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման համար, Մանիլա:


¹⁴ ԱԶԲ, 2011. Կայուն Քաղաքային Ջարգացման Ներդրումային Ծրագիր-Տրանշ 1՝ <http://www.adb.org/projects/42417-023/details>.

¹⁵ ԱԶԲ, 2012. Գնումների Կարողությունների Ջարգացում՝ Գնումների Արդյունքների Բարելավման համար, Մանիլա:

¹⁶ ԱԶԲ, 2014. Նախագահի Հաշվետվություն և Առաջարկություն Տնօրենների Խորհրդին՝ Առաջարկվող Քաղաքականության վրա հիմնված վարկ և Տեխնիկական Աջակցության Դրամաշնորհ Հայաստանի Հանրապետությանը՝ Ենթակառուցվածքների Կայունության Աջակցության Ծրագրի համար, Մանիլա:

Այլ գործընկերների հետ համագործակցելու միջոցով, ԱԶԲ-ն կաջակցի քաղաքականության և ինստիտուցիոնալ բարեփոխումներին, որոնք ուղղված են ստեղծելու պատշաճ իրավական և կարգավորիչ միջավայր՝ էներգետիկայի և այլ ոլորտներում մասնավոր հատվածի մասնակցության համար: ԱԶԲ-ն նաև կաջակցի կառավարության ջանքերին, կապված բիզնեսի կարգավորման հետագա բարելավման և մասնավոր հատվածի զարգացման ընդհանուր իրավական և կարգավորիչ շրջանակի բարելավման հետ: Գիտելիքի շրջանառության միջոցով ԱԶԲ-ն կաջակցի կառավարությանը սովորել և օգտագործել միջազգային լավագույն փորձը՝ կապված կենսունակ և արդյունավետ մասնավոր հատվածի զարգացումը խթանող միջավայրի ստեղծման հետ:

Պետական հատվածի կառավարման խնդիրների ծառ



Ոլորտային արդյունքների շրջանակ (Պետական ֆինանսների կառավարում, 2013–2017)

Երկրի ոլորտային աղեցություններ		Երկրի ոլորտային արդյունքներ		ԱԶԲ ոլորտային գործունեություն	
Ազդեցություններ ԱԶԲ աջակցությամբ	Թիրախներով և ելակետերով ցուցանիշներ	Արդյունքներ ԱԶԲ աջակցությամբ	Ցուցանիշները Լրացուցիչ թիրախներով	Պլանավորված և ընթացիկ ԱԶԲ գործողություններ	ԱԶԲ միջամտություններից սպասվող հիմնական արդյունքներ
Պետական միջոցների ավելի արդյունավետ օգտագործում	Պետական ծախսերի վատնման ցուցանիշի արժեքը ըստ ՀԿՑ-ի կաճի 4.0 մինչև 2017 (2012–2013 բազային արժեք՝ 3.6)	Պետական հատվածի բարելավված կառավարում, ներառյալ պետական հատվածի ֆինանսների կառավարում	Ծրագրային բյուջետավորման անցման ավարտ տրանսպորտի, ջրային և էներգետիկայի և քաղաքային զարգացման ոլորտներում մինչև 2017թ.	Պլանավորված հիմնական միջոցառումների ոլորտներ Տրանսպորտի, ջրային և էներգետիկայի ոլորտների կառավարում, ներառյալ պետական հատվածի ֆինանսների կառավարում Քաղաքային զարգացման կառավարում, ներառյալ տեղական պետական հատվածի ֆինանսների կառավարում	Պլանավորված հիմնական միջոցառումների ոլորտներ Կատարողականի ցուցանիշներ՝ կիրառված տրանսպորտի և ջրային ոլորտների ծրագրային բյուջետավորման համար
Ենթակառուցվածքների ավելի բարձր որակ	Ընդհանուր ենթակառուցվածքների որակի ցուցանիշի արժեքը ըստ ԿՀՑ-ի կաճի 4.7 մինչև 2017 (2012–2013 բազային արժեք՝ 4.3)	Պետական կարգավորումների բարդության ցուցանիշի արժեքը ըստ ՀԿՑ-ի կաճի 4.2 մինչև 2017 (2012–2013 բազային արժեք՝ 3.8)	Հայաստանի վարկանիշը կառավարության արդյունավետության մասով ըստ ՀԿՑ-ի կաճի 62 մինչև 2017 (2012 բազային արժեք՝ 55)	Պետական հատվածի զարգացման իրավական և կարգավորիչ շրջանակ Պլանավորված ծրագրեր՝ նախատեսված գումարներով Ենթակառուցվածքների Կայունության Աջակցության Ծրագիր, Մաս 2 (\$29.8 միլլիոն)	Տրանսպորտի և էներգետիկայի ոլորտային կառույցների և տեղական ինքնակառավարման մարմինների զարգացված կարողություններ
Պետական հատվածի զարգացման բարելավված իրավական և կարգավորիչ շրջանակ			Հայաստանի կարգավորիչ որակի վարկանիշը ըստ ՀԿՑ-ի կաճի 69 մինչև 2017 (2012 բազային արժեք՝ 60)	Ոչ-վարկային Ենթակառուցվածքների Կայունության Աջակցության Ծրագիր, Մաս 2 (PPTA, \$500,000; CDTA \$500,000)	Պատրաստ քաղաքային զարգացման ծրագրեր երեք երկրորդային քաղաքների համար
			Հայաստանի կոռուպցիայի վերահսկման վարկանիշը ըստ ՀԿՑ-ի կաճի 58 մինչև 2017 (2012 բազային արժեք՝ 37)	Ընթացիկ ծրագրեր՝ հաստատված գումարներով Ենթակառուցվածքների Կայունության Աջակցության Ծրագիր, Մաս 1 (\$25 միլլիոն; CDTA	Բիզնեսի կարգավորումների հետագա զարգացում Պլանավորված ծրագրեր Արդյունքների վրա հիմնված կառավարման համակարգեր՝ կիրառված տրանսպորտի և ջրային ոլորտներում

ԱԶԲ = Ասիական Զարգացման Բանկ, ՀՄԻ = Համաշխարհային Մրցունակության Ինդեքս, ՀԿՑ = Համաշխարհային Կառավարման Ցուցանիշներ Աղբյուրներ՝ Հայաստանի Կառավարություն 2012. *Հայաստանի Զարգացման Թաղամասային ծրագրեր 2014–2025*. Երևան; Կ. Շվաբ, 2012. *The Համաշխարհային Մրցունակության Զեկույց 2012– 2013*. Ժնև; Համաշխարհային Տնտեսական Ֆորում; համաշխարհային Բանկ՝ Համաշխարհային Կառավարման Ցուցանիշներ; և ԱԶԲ վերլուծություն